Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Քասախի Ռ. Գևորգյանի անվան N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆրանսերենի /17 դասաժամ/, ՀԵՊ-ի /14 դասաժամ/, հայոց լեզվի և գրականության /5 դասաժամ/, ռուսաց լեզվի /5 դասաժամ/, պատմության /3 դասաժամ/, տեխնոլոգիայի /17 դասաժամ/, հասարակագիտության /10 դասաժամ/ և ֆիզկուլտուրայի /21 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ՝ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում (Ձև 1),մեկ լուսանկար 3x4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին»ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն(Ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ.սեպտեմբերի 19-ին՝ ժամը 14:00-ին, Կոտայքի մարզի Քասախի Ռ. Գևորգյանի անվան N1 միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ.Քասախ, Ս.Ջալալյան 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094.91-16-02 հեռախոսահամարով: